# «Հանգիր Մռով սարի գագաթին»

Փետրվարի 23-ին Մարտակերտի շրջակա բարձունքները գրոհելու գնացինք: Ցավոք, զոհեր ու վիրավորներ էլ ունեցանք: Վերջապես հաջողվել եր գրավել նաև ռազմավարական շատ մեծ կարևորություն ունեցող Մարսանգը: Այդտեղ հաջողվեց շրջափակումից փրկել 36 հոգու, ինչպես նաև արտասահմանցի լրագրողին, որին ազատեցինք՝ չորս կողմից թշնամու խաչաձև կրակի տակ ընկնելով: Այդ մի քանի օրվա ընթացքում բազմաթիվ մարտերի մասնակցեցինք, հատկապես աչքի ընկավ տանկի նշանառու՝ Աշոտ Յարինջյանը: Չորս անգամ ընկանք ականապատված ծուղակներ, սակայն, հաջողվեց ելք գտնել: Ի վերջո բոլոր դժվարությունները հաղթահարելով, ուրք դրեցինք Քելբաջարի հողում: Մարտակերտցի 33-ամյա Աշոտին թվում էր, որ մոտ է հայրենի ավանի ազատագրումը: Սակայն Արցախի խորհրդանիշ Մռով սարի գագաթին, մարտական առաջադրանքը կատարելիս թշնամու արկի բեկորը դիպավ նրա քունքին: Ընկերները փեղայած առատ ջյան միջով մի կերպ վայր բերեցին նրան: Սակայն ուշ էր. Արցախի բանակի մարտիկը հանգավ իր ընկերների ձեռքերին: Հանգավ... Դեռ մի կարգին չվայելած իր նորածնի բերկրանքը:

Մենք՝ Աշոտ Յարինջյանի մարտական ընկերներս, ոչ միայն կիսատ չենք թողնի նրա երազի՝ խաղաղ ու անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացումը, այլև հող կտանենք, որ նրա ընտանիքը երբեք որբություն չզգա ու աննպատակ չհամարի նրա թափած արյունը:

Մարտական ընկերների անունից՝

*Հրամանատար Ղազարյան,*
***Ս. Եղիզարյան, Ս. Շահբազյան***



Աշոտ Յարինջյանի (ձախից) վերջին լուսանկարը.
Սահակ Եղիզարյանի ձեռ